ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Ամբերդի համայնքապետարանը (այսուհետ համայնքապետարան) հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-1) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

1-ին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հաշվիչ դրամական միջոցների մուտքագրման, դուրս գրման այդ թվում աշխատավարձի վճարման գործառույթներ:

Ունի պաշտոնի անձնագրով սահմանված այլ իրավունքներ և պարտավորություններ:

Թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- Միջնակարգ կրթություն, առանց աշխատանքային ստաժի
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Գանձապետական համակարգի մասին>>, <<Գույքահարկի մասին>>, <<Դրամարկղային գործառնությունների մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
- Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2019 թվականի նոյեմբերի 19-ին ժամը 12.00-ին Արմավիրի մարզի Ամբերդի համայնքապետարանի շենքում:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս) դիպլոմի, աշխատանքային գրքույկի պատճենները բնօրինակի հետ մiասին.
- Արական սեռի անձինք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճեն բնօրինակի հետ մյասին.
- Մեկ լուսանկար 3*4 չափի.

- Անձնագրի պատճե.
- Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,
- Հհայտարարություն այն մասին, որը ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10.00-18.00, բացի շաբաթ և կիրակի օրերից Ամբերդի համայնքապետարանում հեռ. 093-32-59-62 կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանում Աբովյան փողով 71, հեռ. 0237-2-76-49:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագիր և հարցաշարերին ծանոթանալու համար կարո ղ են դիմել Ամբերդի համայնքապետարանի աշխատակազմ:

Դիմումների ընդունման վերջին ժամկետը 2019 թվականի նոյեմբերի 4-ը ժամը 18.00-ն: